8383

Հ. Կ. Կ. (Բ) Կ. Վ. Հ. ԿՈՒՍԿՈԼԼԵԳԻԱՅԻ ԻՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՆԱՄԱԿՆԵՐԸ

(Խուսակցության զեմաեն առթիվ)

ՀՐԱՏ. ՀԿԿ (Բ) ԱՆԴՐՅԵՐԿԿՈՄԻ

ЗКП3
Z-22

ԹԻՖԼԻՍ — 1929 Թ.

17.09.2013

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ!

ՅԿՈՅ
Հ-22
24 SEP 2006
09 DEC 2009

Հ. Կ. Կ. (Բ) Կ. Վ. Հ. ԿՈՒՍԿՈԼԼԵԳԻԱՅԻ ԻՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՆԱՄԱԿՆԵՐԸ

1008
ՅԿ 342

(Խուսակցության զեմաև տարիվ)

ՀՐԱՏ. ՀԿԿ (Բ) ԱՆԴՐՅԵՐԿԿՈՄԻ

ԹԻՖԼԻՍ — 1929 Թ.

8383

Տպ. Հրատ. «Զարյա Վոստոկա»-յի, Ռոստովելի պրոսպ., 36. Գլավլիտ 831 Պատ. 1325. Տիր. 1000։

I. ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՏՄԱՆ ՅԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հարգելի ընկերներ!

Ի լրացումն ընդհանուր ինստրուկցիայի՝ կուսակցության շարքերի զբաղման և ստուգման մասին, ՀԿԿ (բ) ԿՎՀ առաջարկում է ազգային հանրապետություններում և շրջաններում կուսակցական կազմակերպությունների զտումն ու տեսը անցկացնելիս զեկավարվել հետևյալ նկատառումներով։

Ազգային հանրապետություններում ու շրջաններում աշխատանքը տարվում է առանձնապես դժվար և բարդ պայմաններում։ Տնտեսական և կուլտուրական հետամնացությունը, հիմնական ազգաբնակության (տեղական ազգությունների) ավանդական ու

կրոնական սովորությունները, ազգային պրոլետարիատի չնչին թիվը, գյուղի չքավորության ու բատրակների թույլ կազմակերպված լինելը, բայերի, կուլակների և հոգևորականության ազդեցությունը, վորոնք շահագործում են մինչ-կապիտալիստական շրջանի սովորությունները, թայֆայական-խմբակային պայքարը, ազգամիջյան թշնամության մնացորդները, կրոնական նախապաշարումները, կենցաղային սովորությունների ազդեցությունը, առանձնապես կանանց վերաբերմամբ, կուլտուրական կենտրոններից կտրվածությունը, հին, ընդհատակյա շրջանի փորձված բոյլշևիկների կադրերի բացակայությունը, կուսակցական կազմակերպությունների յերիտասարդությունը, փոքրաթիվ լինելն ու տերրիտորիալ ցրվածությունը և այլն, և այլն,—այս ամենը ստիպում են Վ.Հ հատուկ ուշադրություն դարձնել զրտման հանձնաժողովների անդամների ընտրության և նախապատրաստական աշխատանքների վրա։

Ի լրացումն ընդհանուր ինստրուկցիայի II բաժ. 14-րդ կետի, զտման հանձնաժողովների անդամները բացի ինստրուկցիայում նշված պահանջներից, պետք է ուսումնասիրած լինեն զտման յենթակա կազմակերպությունների առանձին ազգությունների կենցաղային առանձնահատկությունները, հաշվի առնելով ազգային փոխ-հարաբերությունների հիման վրա առաջ յեկող հակասությունները և վորոշ տեղերում դեռ ևս գոյություն ունեցող ազգայնականությունը, — անհրաժեշտ է ապահովել կոմունիստ ներկայացուցչությունը (առանձնապես կին-կոմմունիստների) հիմնական ազգաբնակությունից։

Զտման հանձնաժողովների ուշիմ և խելացի ընտրությունը և նրանց հեղինակությունն ու ուղիղ աշխատանքը անհրաժեշտ է ապահովել, կանխելով կոպիտ սխալներն ու թերությունները,—այս ճանապարհով անհրաժեշտ է ձեռք բերել կուսակցության ազդեցության ուժեղացումը հիմնական ազգա-

բնակության պրոլետարական, բատրակային մասսայի և չքավոր ու միջակ գյուղացիության վրա, նրանց ուշադրությունը դարձնելով զտման նպատակների և ՀԿԿ (բ) առաջ դրված խնդիրների վրա։

Կայանալիք բաց ժողովների, տեղի և ժամանակի մասին անհրաժեշտ է նախորոք լայն կերպով ծանուցել և ստեղծել բարենպաստ պայմաններ, վորպեսզի պրոլետարական ելեմենտների, չքավորների և բատրակների մասնակցությունը ապահովել, անհրաժեշտ է նախորոք ձեռք առնել համապատասխան միջոցներ, վորպեսզի այդ ժողովներում մուտք չունենան ձայնազուրկներ, բայեր, կուլակներ, վաճառականներ, մոլլաներ և ուրիշ հակախորհրդային ելեմենտներ։

Կոմունիստ անասնապահների, քոչվորների և հողագործների տնտեսական կարողությունը վորոշելիս, նաև նրանց զանազան կատեգորիաների բաժանելիս՝ պետք է գլխավորապես ուշադրության առնել այն, թե այդ

տնտեսության մեջ ոգտագործվում է ուրիշի աշխատանքը շահագործման նպատակով, կամ թե ուրիշի աշխատանքը ոգտագործելը վորքան է կապված յեղել սեզոնի աշխատանքների փուլակոտության հետ, վորին անպայման մասնակցած պիտի լինեն կոմունիստի ընտանիքի բոլոր աշխատունակ անդամները, կամ, վերջապես, ուրիշի աշխատանքը փոխարինվում է ոգտագործելու նպատակով նրա մասնագիտությունը տեխնիկական կուլտուրայի ընդարձակումը։

Վճռականապես հրաժարվելով կրոնական-կենցաղային նախապաշարումներից (կրոնական ծեսեր, բազմակնություն, դալիմ, ֆարաջա, չադրա, չաչվան և այլ կնոջ շահագործման բազմապիսի քողարկված միջոցներ), պետք է ձեռք առնել կտրուկ և խիստ միջոցներ մի տարուց ավելի կուսակցության մեջ յեղող կոմունիստների և պատասխանատու աշխատավորների վերաբերմամբ, միևնույն ժամանակ անհրաժեշտ է գյուղացի բատրակ կոմմու-

նիստների և հատկապես թեկնածուների վերաբերմամբ կիրառել լայն բացատրական և կրթական միջոցներ։ Այս դեպքում այս կամ այն կոմունիստի զտման միջոցին կարևոր է պարզել՝ նշված նախապաշարումները արդյոք հետևանք չեն նրա հետամնացության, թե այստեղ գոյություն ունեն գիտակցական կամ անուղղելիության վորոշ ելեմենտներ։ Պետք է հաշվի առնել, վոր յեթե ազգային կուսկազմակերպությունների նախորդ զտման ժամանակ յերևան եյին հանվում կոմունիստների կողմից նախապաշարման դեպքեր, դրանց դեմ գործադրվում եյին սովորաբար դաստիարակչական միջոցներ, իսկ այժմ այդ միջոցները անբավարար կլինեն։ Միջին-ասիական ազգային հանրապետությունների և շրջանների վերաբերմամբ անհրաժեշտ է ղեկավարվել ՀԿԿ (բ) ԿԿ կազմբյուրոյի 10 հոկտեմբերի 1928 թ. կանանց ազատագրող կոմունիստների վերաբերմամբ հրատարակած վորոշումով։

Պետք է զգույշ մոտենալ, յերբ վորոշվում է վորևե կապ հակախորհրդային ելեմենտի հետ, մանավանդ բատրակի կապը բայի հետ, հաշվի առնելով մինչ-կապիտալիստական հարաբերությունները հետամնաց տեղերում։

Նկատի առնելով արդյունաբերության բացակայությունը կամ նրա թույլ զարգացումը, պետք է զգույշ մոտենալ կուստար կոմմունիստներին, վորոնք ուրիշի աշխատանքը չեն շահագործում։

Առանձին զգուշություն պետք է ցուցադրել հիմնական ազգաբնակությանը պատկանող կոմմունիստի վերաբերմամբ, նրա՝ դեպի իր կուսպարտականություններն ունեցած թույլ վերաբերմունքի պատճառները պետք է պարզել և միջոցներ ձեռք առնել նրան ուղղելու համար։

Բանվորներից, չքավորներից, բատրակներից և միջակ գյուղացիության պատկանող կոմմունիստներից պետք է պահանջել, վոր նրանք մանրամասն ուսումնասիրեն կուսակցության հիմ-

նական խնդիրները և քաղաքագիտության գիտելիքները։

Մեծ մասամբ ազգային կուսակցամակերպությունները գտնվում են այն տերրիտորյալ տեղերում, որոնք միքանի անգամ գրավված են յեղել սպիտակ-գվարդիականներով։ Այդ պատճառով ավելի ուշադրությամբ պետք է մոտենալ այն կոմմունիստներին, որոնք շարքային մասնակցություն են ունեցել հակախորհրդային խմբերում կամ ազգայնական կազմակերպություններում քաղաքացիական կռիվների ժամանակ, նման դեպքերում պետք է գլխավոր ուշադրությունը կենտրոնացնել այն բանի վրա, թե կուսակցական շարքերն անցնելուց հետո վճռքան և ուղղվել նա, ինչ վարքի յե տիրացել և ազատվել է արդյոք անցյալի ազդեցությունից։ Անհրաժեշտ է հաշվի առնել, որ յերբեմն տեղական պայմաններում խմբակցությունների պայքարի միջոցով բողոքներ են առաջ գալիս ընդդեմ քաղաքական սխալների և կուսղեկավարության, պետք է ամեն մի առանձին դեպքում պարզել յերևան հանված խմբակցության պատկերը։

Յեթե կուսակցությունը պարտավոր է առանձին զգուշությամբ վերաբերվել դեպի անկուսակցականները՝ կրոնի և կանանց կենցաղային կաշկանդումների դեմ մղվող պայքարում (քողարկվածություն, ֆարաջա և այլն), ապա նա ավելի խիստ և պահանջկոտ պիտի լինի դեպի կոմմունիստները, պետք է պահանջել, որ նրանք վերջնականապես կտրեն իրենց կապերը կրոնական կուլտերից և հրաժարվեն կանանց ազատագրիչներ ամեն մի ձևերից։

Հաշվի առնելով ազգային կազմակերպությունների աշխատանքների հատուկ դժվարությունները, խորացնելով ընդհանուր ինստրուկցիայի IV բաժանման 28-րդ կետը, պետք է ուշադրությամբ քննել, թե ինչպես է ընթանում դաստիարակչական աշխատանքները, ինչպես է անցկացնում կուսակցության քաղաքականու-

թյունը աղգային, հողային բարենորոգումների բնագավառում, ինչ է արված խորհրդային բջիջների կողմից ապարատի հիմնավորման, առողջացման և առաջ քաշման բնագավառներում։ Այսպիսով պետք է ոգնել բջիջների աշխատանքներին և գործադրել դաստիարակչական բնույթ կրող միջոցներ, մաքրելով նրանց այլանդակներից, անպետքներից և հակախորհրդային ելեմենտներից։

Պետք է աշխատել զտման և ստուգման հետևանքով աշխուժացնել կազմակերպությունների աշխատանքները և ուժեղացնել բջիջների կուսակցական-դաստիարակչական աշխատանքները։

ՀԿԿ (բ) ԿՎՀ Կուսկոլլեգիայի քարտուղար՝

Յեմ. Յարոսլավսկիյ

———

II. ՀԿԿ (Բ) ՎՈՉ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲՋԻՋՆԵՐԻ ԶՏՄԱՆ ՅԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հարգելի ընկերներ!

Ի լրացումն ընդհանուր ինստրուկցիայի՝ վոչ-արտադրական բջիջների զտման և աշխատանքների տեսի մասին, անհրաժեշտ է հաշվի առնել այդ բջիջների աշխատանքների առանձին դժվար պայմանները։

«Ներկա խորհրդային ապարատը դեռևս ուժեղ է սրսկված հին չինովնիկական ելեմենտներով և նախկին իշխող դասակարգի մնացորդներով, վորոնց մեջ դեռ ապրում է ատելությունը դեպի խորհրդային կարգերը։ Բյուրոկրատական այլանդակությունները, դեպի աշխատավորության կարիքները ցուցադրած անտարբերությունը, աղաղակող թերությունները և դատապար-

տելի ձգձգումները հաճախ խանգարում են պետական որգանների աշխատանքները։ Պետական - կոոպերատիվ ապարատների առանձին ճյուղերը հասնում են ուղղակի բթացման և ձուլվում ազգաբնակության բուրժուա-կապիտալիստական ելեմենտների հետ, առաջ բերելով այդ որգանների հիմնական զուման անհրաժեշտությունը» (ՀԿԿ (բ) ԿԿ 1928 թվի նոյեմբերյան պլենումի բանաձևը)։

Շնորհիվ վոչ-արտադրական բջիջներում տիրող նման որյեկտիվ շրջապատի ու աշխատանքի պայմանների, «պետական ապարատը, իր հին չինովնիկական կարգի ձևերով դնում է իր դրոշմը նրանցում աշխատող կոմունիստների կազմի վորոշ մասի վրա» (ՀԿԿ (բ) ԿԿ նոյեմբերյան պլենումի բանաձևը)։

Մյուս կողմից խորհրդային, կոոպերատիվ և տնտեսական որգանների ապարատներում «վորոշ տեղեր ներս են ծծվել կարյերիստներ, ավանտյուրիստներ, վորոնք կոչվել են կոմմունիստներ և խաբում են մեզ, վորոնք յեկել են մեզ մոտ նրա համար, վոր կոմմունիստները այժմ գտնվում են գործի գլուխ» (Լենին)։

Խորհրդային, կոոպերատիվ և տընտեսական ապարատների այս ճահճացումը, և նույնպես նրա ազդեցության «դրոշմը» մի քանի կոմմունիստների վրա, այդ բջիջներում յերևան յեկող հատուկ տիպի ցավոտ յերևույթներին, կուսակցության մեջ նկատվող մանրբուրժուական տատանումների, աջ թեքումների և հաշտվողականության աղբյուր են հանդիսանում։

Աշխատավոր լայն մասսաներից կըտրվածությունը, ապարատի աշխատակիցների նեղ շրջանակում սահմանափակող բջիջի աշխատանքները բյուրոկրատիզմի, ձգձգման, պրոտեկցիոնիզմի, բամբասանքների, քննողության և հակախորհրդային ելեմենտների հետ մերձեցման, տաքուկ նստակեցության, վատնումների, փտումների, վերածնության, առաջ քաշման ընդդիմության կարևոր աղբյուրներն

են հանդիսանում, իսկ այստեղից առաջ է գալիս իդեոլոգիական զինաթափում և առանձին կոմմունիստների պայքարի ունակության թուլացում։

ՀԿԿ (բ) ԿԿ 1926 թ. դեկտեմբերի 20-ի վորոշման մեջ մատնանշվում է՝

«Խորհրդային բջիջների գլխավոր ուշադրությունը կենտրոնացնել անցկացնելու իրենց հիմնարկներում պայքար ընդդեմ անտնտեսավարության, վատնումների, ձգձգումների, ձևականությունների, պրոտեկցիոնիզմի, ըշտատների ուռեցման և այլն, պաշտպանելով ինչպես բջիջի անդամների, նույնպես և անկուսակցականների կողմից առաջադրած ինիցիատիվը, վորոնք գործում մտցնելու յեն պարզություն և եժանացնելու յեն ապարատը»։

Ցնելով վոչարտադրական բջիջների աշխատանքների այս առանձնահատուկ պայմաններից և նրանց խնդիրների նշանակությունից, զտման հետ միասին զուգընթաց պետք է լուրջ հետազոտման առարկա դարձնել նաև նրանց աշխատանքների վորակը։

Վոչարտադրական բջիջների աշխատանքների վորակի ստուգումը

Ի լրացումն ընդհ. ինստրուկցիայի IV բաժանման 28-րդ կետի, վոչարտադրական բջիջների աշխատանքները հետազոտելիս անհրաժեշտ է պարզել՝

1. Ինչպես է կիրառվում ՀԿԿ (բ) ԿԿ 1926 թ. դեկտեմբերի 20-ի վորոշումը խորհրդային բջիջների մասին և ինչ հետևանքներ են ունեցել այդ աշխատանքները։

2. Բջիջի աշխատանքները տվյալ հիմնարկի կամ նրան կից ձեռնարկի աշխատավոր մասսաների կազմակերպչական գործում։

3. Բջիջի դերը՝ բջիջի անդամներին լայն պրոլետարական մասսաների հետ կապելու խնդրում և այդ մասսաների մասնակցությունը ապարատի առողջացման ու լավացման գործում, բյուրոկրատիզմի, անտնտեսավարության, ապարատի ճահճացման դեմ մղվող պայքարում։ Այդ աշխատանքների մեթոդներն ու հետևանքները։

4. Բջիջի ակտիվությունը առաջ քաշման հարցում և առաջ քաշվածներին հալածելու դեմ պայքարում։

5. Բջիջի աշխատանքների հետևանքները ինքնաքննադատությունը ծավալելու և անցկացնելու ասպարիզում (թերություններ ու նվաճումներ)։

6. Բջիջի աշխատանքները բջիջի անդամների դաստիարակության գործում, նրանց միմյանց ձուլելու, պայքարելու ընդդեմ փտողականության, կենցաղային այլասերման և առանձին անհատ անդամների կապը ոտար ելեմենտների հետ տեղի ունեցող դեպքերը կանխելու (իր ժամանակին յերևան բերելն ու նախազգուշացումը)։

7. Բջիջի մասսայական աշխատանքները հիմնարկի անկուսակցական աշխատակիցների մեջ (պրոֆմիությունները, արտադրական հանձնաժողովներ, պատի թերթեր, կամավոր կազմակերպություններ և այլն), անկուսակցականներին բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարում առաջ քաշելու տեսակետից (առանձնապես կապելով այդ գործում յերիտասարդներին, վորոնք մեծացել են աշխատանքի նորագույն պայմաններում)։

Վոչարտադրական բջիջների տարբեր խմբերի ստուգման մեթոդները

Աչքի առաջ ունենալով վոչարտադրական բջիջների մի քանի բացառիկ առանձնահատկությունները, վորոնք բջիջին կցում են տարբեր կատեգորիաների, այդպիսի բջիջների աշխատանքների հետազոտման ժամանակ պետք է կիրառել տարբեր մոտեցումներ, հաշվի առնելով այդ առանձնահատկությունները։ Այս տեսակետից հատուկ մոտեցման մեթոդները վորոշելու համար վոչարտադրական բջիջները կարելի յե բաժանել ժոտավորապես հետևյալ խմբերի՝

1. Հիմնարկին կից բջիջ, վոր իր աշխատանքներով կապված է պրոլետարական մասսայի հետ, որինակ՝ տրեստներ, պրոֆմիություններ, աշխատանքի որգաններ, սոցապահովության, բանվորական սպառկոոպներ,

բնակարանային կոոպերատիվներ և այլն։

2. Հիմնարկին կից բջիջ, վոր կապված է գյուղական մասսաների հետ, որինակ՝ հողային որգաններ, գյուղատնտեսական կոոպերացիա, գյուղատնտեսական վարկային կոոպերացիա, գյուղատնտեսական բանկեր, գյուղական տրեստներ, գյուղացու տներ, հողանտառային ձեռնարկներ և այլն։

3. Կուլտուրական հիմնարկներին կից բջիջներ—լուսավորության, առողջապահության, կուսկոմիտեների որգաններ և այլն։

4. Վարչական և դատական հիմնարկներին կից բջիջներ — ներքին գործերի, վարչական, միլիցիայի, ժողդատարանների որգաններ և այլն։

5. Կրթական հիմնարկներին կից բջիջներ։

Վոչարտադրական բջիջների տարբեր խմբերի աշխատանքների վորակը հետազոտելիս անհրաժեշտ է բացի ընդհանուր հարցերից՝ պարզել նաև նրանց աշխատանքների հետ կապված լրացուցիչ հարցեր, այսպես, որինակ՝ հողային և գյուղատնտեսական վարկային հիմնարկին կից բջիջի աշխատանքները հետազոտելիս անհրաժեշտ է պարզել լրացուցիչ կետով, թե ինչ է արված բջիջի կողմից կանխելու համար գյուղի վարկավորման, մեքենայացման քաղաքականությունից շեղվելու դեպքերի դեմ և այլն։ Աշխատանքի բորանների կից բջիջների համար—բջիջի դերը ընդդեմ պրոտեկցիոնիզմի, ապարատի բթացման, բյուրոկրատիզմի, վատնումների և այլն։

Միքանի բջիջների ստուգման հետևանքների առթիվ զեկուցումներ կարելի է կազմակերպել բանվորական ժողովներում, վորոնց սպասավորում է տվյալ հիմնարկը, որինակ՝ տրեստի բջիջը—տրեստի յենթակա ձեռնարկների բանվորների ժողովում, յերկաթուղային վարչության կից բջիջը—յերկաթուղային արհեստանոցների բանվորների ժողովում, արտադրական պրոֆմիությունների բջիջները—խոշոր տեկստիլ գործարանների և մետաղա-

գործարանների բանվորների համապատասխան ժողովներում և այլն։

Բջիջի ստուգումից առաջ անհրաժեշտ է նույնպես ստանալ այս կամ այն ձևի հավանությունը ավյալ հիմնարկի համար՝ նույն հիմնարկի հետ կապված բանվորների կողմից, վորի համար նախորոք պետք է տեղեկացնել բանվորական կազմակերպություններին հիմնարկի բջիջի առաջիկա ստուգման մասին, մատնանշելով հանձնաժողովի համար համապատասխան նյութեր ուղարկելու ձևը և միջոցները։

Կազմակերպության առանձնահատկությունները ու գործաց կիրառումը

1. Միջոցներ ձեռք առնել, վորպեսզի կազմակերպել հիմնարկի աշխատակիցների կողմից՝ կոմունիստների մասին գրավոր հայտարարություններ ընդունելը։

2. Առանձնապես ուշադրությամբ քննել կոմունիստների մասին անկուսակցականների կողմից յեղած հայտարարությունները, այն անկուսակցականների, վորոնք պրոֆմիությանն անդամ չեն և ձայնազուրկ են, վորպեսզի կանխվի զոման շահագործումը կարյերայի և քծնությունների տեսակետից։

Նույնպես ուշադրությամբ և զգուշությամբ մոտենալ կոմունիստ-ադմինիստրատորների մասին յեղած գանգատներին, վորոնք կարող են հետևանք լինել ադմինիստրատորի կողմից յեղած իրավացի կարգադրությունների՝ աշխատանքի դիսցիպլինայի, խնայողության ռեժիմի և այլն մասին, մյուս կողմից խիստ պատժել այն ադմինիստրատորներին, վորոնք խանգարում են բջիջներին հիմնարկներում վերահսկողության աշխատանքներ տանել։

3. Կոմունիստներին ստուգելիս պետք է զգույշ և զիջող մոտեցում ցուցադրել սպասավորող պերսոնալին (կուրյերներ, մաքրողուհիներ և այլն), նույնպես և նոր աշխատանքներ սկսած առաջ քաշվածների վերաբեր-

մամբ, նրանց քաղաքական գրագիտության, ժողովներ հաճախելու և այլն փոքրիկ խախտումների վերաբերմամբ։

4. Վոչ արտադրական բջիջներում կոմմունիստների վորակը գնահատելիս կարևոր մոմենտներն են՝ մասսաների հետ ունեցած կապը, բյուրոկրատիզմի դեմ պայքարը, աշխատանքի դիսցիպլինան, խնայողության ռեժիմի կիրառումը։

5. Վատնողներին ժոտենալիս անհրաժեշտ է զգույշ վերաբերվել դեպի առաջ քաշվածը, վոր իր անբավարար պատրաստականության և բջիջի ու ապարատի ոգնության բացակայության շնորհիվ սխալվում է հաշվետվություններում և շատ հաճախ խարդախների և անցորդների զոհ է դառնում։

6. Ադմինիստրատիվ ճնշումների կամ գործից հեռացնելու դեպքերի մասին յեղած հայտարարությունները, վոր ինքնաքննադատության հետևանքների նմուշներ կարող են լինել, քննելիս անհրաժեշտ է նկատի առնել աշխատանքի դիսցիպլինայի հնարավոր թուլացումը և ադմինիստրացիայի՝ ապարատի լավացման համար մղվող պայքարին՝ բողոքողը կարող է հակադրել։

7. Յերբ վոչարտադրական բջիջներում յերևան են հանվել բանբասանքների, հետապնդումների և խնամիության դեպքեր, վորոնք սուր կերպարանք են ստացել, հարկավոր է շատ զգույշ և ուշադիր մոտեցում ցույց տալ այդ հարցերը քննելիս, խիստ և կտրուկ միջոցներ գործ դնել, յերբ հետապնդումներն ու հալածանքներն ուղղված են առաջ քաշվածների, բանթղթակիցների և հնտրագետների դեմ։

8. Անհրաժեշտ է առանձին ներողամտությամբ վերաբերվել դեպի սպեցկոմմունիստները, վորոնց մանր թերություններին պետք է հակադրել նրանց կատարած մասնագիտական աշխատանքները։

9. Բաց և ընդհանուր ժողովներ կազմակերպելիս, ուր դրվելու յեն բջիջի

զման և ստուգման հետևանքների արդյունքները, պետք է լայն կերպով ապահովել անկուսակցական աշխատակիցների և հատկապես մասնագետների մասնակցությունը, թույլ չտալով ներկա լինել ընտրական ձայնի իրավունքից զրկվածները, նմանապես և պրոֆմիության վոչ-անդամները։

III. ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՆ ԿԻՑ ԲՋԻՋՆԵՐԻ ԶՏՄԱՆ ՑԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիական կրթական հիմնարկներին կից բջիջների աշխատանքների ընդհանուր պայմանները (վուզ, վտուզ, տեխնիկում, բանֆակ, կուրսեր, խորկուս դպրոցներ և այլն) շատ դեպքերում համանման են մնացած վոչարտադրական բջիջների աշխատանքների պայմաններին—պրոլետարական մասսաների հետ անմիջական կապի բացակայությունը, մասնագետների (պրոֆեսորներ, ուսուցիչներ) և անկուսակցական ուսանողության ազդեցությունը։ Բայց այդ բջիջների աշխատանքների ոբյեկտը—դաստիարակվող յերիտասարդությունը, վորի սոցիալական կազմը ամեն տարի բարե-

փոխվում է, ավելի բարենպաստ է աշխատանքների համար, քան այլ՝ վոչարտադրական բջիջներում։

Այդ բջիջների ստուգման ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մասսայական աշխատանքների, բանվորական մասսաների և պրոֆմիությունների հետ ունեցած կապի վրա, պետք է հնարավորության սահմաններում հետազոտել, թե սովորող բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը իր ստացած գիտելիքները ինչպես է կիրառում բանվորական և գյուղացիական մասսաների մեջ իր արձակուրդի և արտադրական փորձերի ժամանակ և ինչ հետևանքներ են ունեցել այդ աշխատանքները։

Դատապարտելով չափազանց ակադեմիզմը, վոր անցեկացվում կուսաշխատանքներից կտրվելով, ինչպես ուսանողի համար կուսակցական թերություն, անհրաժեշտ է հաշվի առնել դրա նշանակությունը, ինչպես ուսանողի կողմից ցուցադրվող աշխատանքի

դիսցիպլինա, պետք է պարզել՝ ավելորդ ծանրաբեռնումն չե՞ արդյոք այդ կրթական տեսակետից, նույնպես չափազանց ակադեմիզմը հետևանք չե՞ արդյոք կուսխնդիրների թերագնահատության ուսանողի կողմից։

Աչքի առաջ ունենալով ուսանողների միջև ստիպենդիայի ուղիղ բաժանման նշանակությունը, անհրաժեշտ է հետազոտել, թե բջիջի կողմից ինչպես է կիրառվում այս դեպքում դասակարգային զգոնությունը (принцип) և հսկում է արդյոք դրա ուղիղ կիրառման վրա, հաշվի առնելով ամեն մի ուսանողի դրությունը։

Բողոքների քննության ժամանակ անպայման վարչական-ուսուցչական կազմը նկատի պիտի առնի, վոր ընդունի իր վրա ուսանողության կողմից յեկող հնարավոր դանդատները, այն ուսանողների, վորոնք անփույթ վերաբերմունք են ցուցադրում դեպի դպրոցական պարապմունքները, կամ խախտում են կրթական հիմնարկում, հանրակացարաններում տիրող ընդ-

հանուր կարգերը, վորոնց վարչական-մանկավարժական կազմը կարգի յե հրավիրել։

Յերկար ժամանակ կտրվելով արտադրությունից, ընտանեական կյանքի պայմաններից ուսանողության շրջանում պատահում են կենցաղային այլանդակություններ դեպքեր (սեռական սանձարձակություն և այլն), այդ տեսակետից՝ անհրաժեշտ ե հետազոտել, թե բջիջը իր ժամանակին ինչպիսի նախազգուշացնող միջոցներ ե գործ դրել յերևան հանելու և լիկվիդացիայի յենթարկելու այդ դեպքերը։

Կրթական հիմնարկների բջիջների համար հատուկ նշանակություն ունեն պայքարի կազմակերպումը . ընդդեմ իդեոլոգիական թեքումների, պետք ե հետազոտել, թե ինչպես ե կիրառվում XV կուսհամագումարի դիրեկտիվը ոպպոզիցիայի լիկվիդացիայի մասին, ինչ ե արված շարքային ոպպոզիցիոներների վրա իդեոլոգական ազդեցություն ներգործելու և անուղղելի յերկդիմի, կուսակցությանը խաբող տրոցկիստներին կուսակցությունից հեռացնելու բնագավառում։

Ինչպես կրթական հիմնարկների զտումից և ստուգումից առաջ, նույնպես և այդ աշխատանքներն անցկացնելուց և վերջացնելուց հետո անհրաժեշտ ե լայն հնարավորություններ ստեղծել, վորպեսզի բաց ժողովներում անկուսակցական բանվոր ուսանողությունը հնարավորություն ունենա տալու հայտարարություններ ու դիրվատումներ։

ՀԿԿ (բ) ԿՎՀ Կուսկոլլեգիայի
քարտուղ.՝ Յեմ. Յարոսլավսկիյ

IV ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՏՆԵՐԻ ԶԸՏՄԱՆ ՅԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԽԸՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հարգելի ընկերներ!

Ի լրացումն ՀԿԿ (բ) շարքերի զբաղման և ստուգման առթիվ հրատարակած ընդհանուր ինստրուկցիայի, ՀԿԿ (բ) ԿՎՀ գյուղական բջիջների զբաղման և ստուգման ժամանակ առաջարկում է ղեկավարվել հետևյալ նկատառումներով։

Գյուղական բջիջների զբաղման և ստուգման ժամանակ ամենից առաջ անհրաժեշտ է հաշվի առնել ՀԿԿ (բ) նոյեմբերյան պլենումի տված հետևյալ բնութագիրը. «Գյուղական կազմակերպությունների կազմում դեռևս պրոլետարական էլեմենտների թիվն ու կշիռը շատ թեթև է և կոլտնտեսությունների մեջ յեղած կադրերը

ուղղակի չնչին են։ Սրա հետ միասին վորոշ դեպքում այդ կադրերի կազմում զգալի բաժինն ընկնում է ունևոր գյուղացիների վրա, իսկ յերբեմն նույնիսկ կուլակների հետ մոտիկ կապված, բանվոր դասակարգի թշնամի ելեմենտների վրա։ Այս հանգամանքը դնում է մեր առաջ այդ կազմակերպությունների վճռական բարելավման, հիմնական զտման և զգալի բարեփոխման յենթարկելու անհետաձգելի խնդիրը»։

Դրա հետ միասին անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, վոր գյուղական կազմակերպությունները իրենց կուսակցական աշխատանքները տանում են անհամեմատ դժվար պայմաններում, քան քաղաքի կազմակերպությունները։ Գյուղական բջիջների սակավաթիվ լինելը, նրանց ցրվածությունը և հաճախ տերրիտորիալ կտրվածությունը հեռու գտնվող դեկավար կուսորգաններից, մանր սեփականատեր մասսաներով շրջապատված լինելը, վորոնք կուլտուրապես

ավելի հետամնաց են, քան պրոլետարիատը և հաճախ տնտեսապես կախված են կուլակներից, գյուղական կոմունիստների վրա գործ դրվող բյուրոկրատական ճնշումը պետական բարձր հիմնարկների, հասարակական, կոոպերատիվ և այլ կազմակերպությունների կողմից՝ շատ դեպքերում առիթ են ծառայում կուսակցական գիծի թերի գնահատման գյուղական բջիջների կողմից, անմիջական ճնշումը կապիտալիստական եղեմնտների կողմից գյուղական կոմմունիստների վրա, վոր հաճախ արտահայտվում է տերրորով, գյուղական կոմմունիստ-ծառայողների և չքավորների տնտեսական վիճակի դժվար կացությունը, և, վերջապես, շատ հնչին թիվը համոզված, փորձված բոլշևիկների, առանձնապես ընդհատակյա աշխատավորների, վորոնք կարող էին ապահովել կուսակազմակերպությունների ուղիղ ղեկավարությունը։

Վերև հիշած դժվար պայմանները, անկախ գյուղական կազմակերպությունների աշխատանքներից, չեն կարող բացասական պայմաններ չը-ստեղծել նրանց աշխատանքների համար և չազդել առանձին գյուղական կոմմունիստի վարքի վրա։ Այս հանգամանքը անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես բջիջի ընդհանուր գնահատականը տալիս, նույնպես և առանձին կոմմունիստներին ընորոշելիս։

Անհրաժեշտ է վճռականապես մաքրել գյուղական բջիջները «նրանցում ներս սողոսկած դասակարգային ոտար եղեմնտներից կամ կուլակային տարրերի հետ ձուլվածներից—վաճառականների, բայերի և հոգևորականության, կուսակցության այն անդամներից, վորոնք իրենց քաղաքականությամբ կուսակցությունից հետ են մղում բատրակներին ու չքավորներին, այն անդամներից, վորոնք վոչ մի մասնակցություն չեն ցույց տալիս գյուղատնտեսական վերաշինության մեջ, այն չինովնիկական եղեմնտներից, վորոնք չեն կատարում կուսակցական դիրեկտիվները՝ չքա-

վորներին հենարան ունենալով՝ միջակների հետ համագործակցություն ստեղծելու մասին, այն կուսակցական անդամներից, վորոնց տնտեսության մեծացումը նրանց առաջ խոչնդոտ է հանդիսանում կազմակերպված կոմունիստական պրոպագանդա մղելու գյուղում, հեղափոխական որենքները խախտողներից, իրենց դիրքը անձնական շահերին ծառայեցնելու միտումավոր կուսակցականներից»։*)

Սրա հետ միասին անհրաժեշտ է ներողամիտ վերաբերվել դեպի գյուղական կոմմունիստների ստուգումը, վորոնք իսկապես նվիրված են կուսակցության, առանձնապես դեպի քաղաքացիական կռիվներում մասնակցողները, դեպի բատրակները, կինբատրակները, չքավոր և միջակ կանայք, վորոնք չեն կարողացել ավելի ակտիվություն յերևան բերել գյուղական միջավայրի կենցաղային անբնական պայմանների շնորհիվ, նույնպես և դեպի գյուղական միջավայրից յելած ինտելիգենցիան։ Առանձնապես անհրաժեշտ է ամեն մի առանձին դեպքում պարզել պատճառները ու պայմանները, վորոնց շնորհիվ կոմունիստը վորևե հանցանք է գործել և ընդհանրապես բջիջի դերը նրանց քաղաքական դաստիարակչական և այդ հանցանքների նախազգուշացման գործում։

Բայոնական և թեմերի պատասխանատու աշխատավորներին ստուգման յենթարկելիս անհրաժեշտ է պահանջել դասակարգային գծի ուղիղ կիրառման տվյալներ, նույնպես և պարզել նրանց անձնական ակտիվությունը բյուրոկրատիզմի դեմ մղվող պայքարում, նրանց կապը մասսաների հետ և մասսաների վրա հենվելը իրենց աշխատանքների ընթացքում։

Պահանջելով կոմմունիստներից, վոր նրանք մասնակցեն կոլեկտիվ տնտեսություններին կամ արտադրական-կոոպերատիվ միավորներին տվյալ ռայոնում, անհրաժեշտ է ամեն մի

*) XVI կոնֆերենցիայի և ապրիլյան պլենումի վորոշումը։

առանձին կուսակցականի վերաբերմամբ գործնական վճիռ կայացնելիս խուսափել ձևականությունների, այն կոմմունիստների վերաբերբամբ, որոնք ձգտում են դեպի ինդիվիդուալ տնտեսություն, հաշվի առնելով այն հանգամանքը, թե արդյոք տվյալ գյուղում կամ ռայոնում գոյություն ունեն բարենպաստ պայմաններ կոլլեկտիվ տնտեսություն կազմակերպելու համար, այս կամ այն կոմմունիստի մուտքը այս կամ այն բայոնի կոլտնեսության մեջ արդյոք առաջ չի բերի նրա ինդիվիդուալ տնտեսության քայքայում, առանց ոգուտ բերելու կոլլեկտիվիզացիային և այլն։

Վերաստուգելով գյուղական կազմակերպությունների աշխատանքները, ի լրացումն ընդհանուր ինստրուկցիայի IV բաժանման 28-րդ կետի, անհրաժեշտ և հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ հարցերի վրա.

1. Բջիջի դերը գյուղական տնտեսությունը կոլլեկտիվիզացիայի և կոոպերացման յենթարկելու, ցանքսերի

ընդլայնելու, բերքը բարձրացնելու գործում։

2. Բջիջի վերաբերմունքը դեպի դասակարգային գծի հակասությունների փորձերը գյուղում և նրա դերը այդ դեպքերը կանխելու գործում, իր ժամանակին յերևան հանելը և լիկվիդացիայի յենթարկելը, աջ թեքման դեմ պայքարը։

3. Բջիջի մասսայական աշխատանքների դրությունը և նրա մասնակցությունը կամպանիաներում (հարկային, հացամթերման, խորհուրդների վերընտրություններ)։

4. Բջիջը ինչպես և ղեկավարում բատրակներին ու չքավորության և այդ աշխատանքների դրությունը։

5. Ի՞նչ հիմքերի վրա յե դրված պայքարը ընդդեմ այն կոմմունիստների, որոնք ձուլվում են դասակարգային ոտար ելեմենտների հետ, բջիջի վերաբերմունքը դեպի կոմմունիստները, որ կուլակների հետ արբեցողությամբ են պարապում, որ ավելի յե նպաստում նրանց միմյանց հետ ձուլվելուն։

Բջիջի և թեմի կամ բայոնի կոմիտեյի ձեռք առած միջոցները գյուղի կոմմունիստների տնտեսությունները կոլեկտիվիզացիայի յենթարկելու համար։

Անհրաժեշտ է յերևան հանել գյուղացի կոմմունիստների կողմից հեղափոխական որենքների խախտման դեպքեր, նույնպես կաշառակերության, ճնշման, հրամայողության, իր դիրքի ի չարը գործադրման, գյուղերթակցին հալածելու, չքավորության ֆոնդերի բաժանման ժամանակ կատարած հանցագործության, նախորոք անտեղի և սխալ յավելյալ տուրքերով ծանրաբեռնելը չքավոր և միջակ տնտեսություններին, իջեցնելով կուլակների հարկերի քանակը, մտացածին և անտեղի զրկելով ընտրական ձայնի իրավունքից հացամթերումների ընթացքում։

Գյուղական կազմակերպությունների զտման և ստուգման ժամանակ հանձնաժողովների կարևորագույն խնդիրը պետք է լինի ազատվել բատրակների, չքավորության և միջակ գյուղացիության ակտիվ մասնակցությունը զտման և ստուգման գործում։ Այս նպատակով անհրաժեշտ է նախապես մտածել և լուրջ վերաբերվել այդ խնդրի մինչև անգամ ամենաչնչին մանրամասնություններին, ինչպես բանավոր և գրավոր բողոքներ ընդունելը, բաց ժողովներ կազմակերպելու տեղի և ժամանակի վորոշումը և այդ առթիվ իր ժամանակին ծանուցելը և այլն։

Ստուգման յենթակա բջիջի ժողովի տեղը և ժամանակը պետք է ընտրել այն հաշվով, վորպեսզի նրանում լայն մասնակցություն կարողանան ունենալ խորտնտեսության բանվորները, գյուղատնտեսական կոմմունաների և արտելների անդամները, բատրակները. լայն մասսաներին դեպի զտման ու ստուգման քաշելը ունի իր ահագին նշանակությունը վոչ միայն բջիջի կամ առանձին կոմմունիստներին գնահատելու տեսակետից, այլ նաև այդ մասսաների լավագույն և ակտիվ ներկայացուցիչներին դեպի կուսակցու-

թյան շարքերը գրավելու տեսակետից։ Այդ ընկերների մասնակցությունը զտման և ստուգման մեջ կարող է պարզել նրանց առաջ կուսակցության խնդիրները և կոմունիստի իրավունքներն ու պարտականությունները, և ավելի մեծ գիտակցությամբ կվերաբերվեն կուսակցության շարքերը մըտնելիս։

Անհրաժեշտ է բջիջների բաց ժողովներում գրավել գյուղական ինտելիգենցիայի ներկայացուցիչներին, վորոնք նվիրված են խորհրդային իշխանության և ակտիվ աշխատում են գյուղի վերաշինման գործում (գյուղատնտեսներ, յերկրաչափներ, անտառապահներ, բժիշկներ, մանկավարժներ և այլն), առանձնապես բջիջի տարած աշխատանքները գնահատելիս գյուղատնտեսության ռեկոնստրուկցիան անցկացնելու, վարելահողերը ընդլայնելու, բերքը բարձրացնելու հարցերը շոշափելիս։

Ձեռք առնելով բոլոր հնարավոր միջոցները զտման և ստուգմանը գրավել

կարելույն չափով մեծ թվով վերև հիշված անկուսակցական խմբերին, դրա հետ միասին անհրաժեշտ է ի նկատի ունենալ այն հնարավորությունները, վորոնցով կարող են ոգտվել իրենց հակակուսակցական և հակախորհրդային նպատակներին հասնելու համար կուլակներն ու նրանց յենթակա ելեմենտները։ Այդ հնարավորությունները կանխելու նպատակով—առաջին՝ բջիջների բաց ժողովներում արգելել կուլակների, ձայնազուրկների և այլ թշնամի և ոտար ելեմենտների մուտքը, յերկրորդ՝ ժողովում ներս պրծած յենթակուլակների յելույթներին, վորոնք կաշխատեն կուսակցության և առանձին կոմունիստների հասցեին զրպարտություններ հորինել, պետք է ուժեղ հակահարված տալ և, յերրորդ՝ համբերատարությամբ բացատրել չքավորներին և միջակներին հետաքրքրող հարցերը, վորոնք կապված են կուսակցական քաղաքականության հետ գյուղում։

Զման և ստուգման առթիվ յեղող բաց ժողովներում զեկուցումների և զրույցների միջոցով բացատրել, վոր զումն ու ստուգումը կատարվում է վոչ թե նրա համար, վոր կուսակցությունը չի հավատում իր գյուղական բջիջներին, այլ այն նպատակով, վորպեսզի ոգնություն ցույց տա գյուղական բջիջների դժվարին աշխատանքներին, նրա շարքերը քաշելով բատրակներին և չքավորներին, և մաքրելով կուսակցությունը պատահական, բանվոր դասասարգին ոտար ելեմենտներից։

Ժամանակը խնայելու և ստուգման հանձնաժողովների աշխատանքը ռացիոնալ ոգտագործելու նպատակով անհրաժեշտ է մինչև այս կամ այն բջջի ստուգման ավարտումը տեղեկացնել իր ժամանակին հետևյալ՝ ստուգման յենթակա գյուղի բջիջին՝ ստուգման իսկական պլանի մասին, վորպեսզի տվյալ բջիջը հնարավորություն ունենա իր ժամանակին տեղեկացնել կոմունիստներին և

անկուսակցական մասսային ժողովի տեղի և ժամանակի մասին և այլն։

Հաշվի առնելով գյուղական բջիջների աշխատանքի պայմանների արտակարգ դժվարությունները ու բարդությունները, նույնպես և այդ բջիջների զման և ստուգման կիրառման կազմակերպությունը, տեղական վերահսկիչ հանձնաժողովները առանձին ուշադրությամբ ու փույթով պետք է նախապատրաստեն ոտուգման հանձնաժողովներ, վորոնք նախորոշված են լինելու գյուղերի համար։

Գյուղական բջիջների զումն ու ստուգումը պետք է մեծ չափով ոգտագործված լինի համապատասխան կոմիտեների կողմից, նրանց մանրամասն կերպով հրահանգելու և ոգնելու գործնական հարցերում բազմակողմանի տնտեսական և կազմակերպչական միջոցներով։

ՀԿԿ (բ) ԿՎՀ կուսկոլլեգիայի
քարտուղար՝ Յեմ. Յարոսլավսկիյ

V. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄ. ԲՋԻՋՆԵՐԻ ՁՏՄԱՆ ՅԵՎ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հարգելի ընկերներ!

Ի լրացումն ՀԿԿ (բ) շարքերը մաքրելու և ստուգելու առթիվ հրատարակած ընդհանուր ինստրուկցիայի, ՀԿԿ (բ) ԿՎՀ առաջարկում է Կարմիր բանակի և նավատորմի կուսակցական կազմակերպությունները մաքրելիս և ստուգելիս ղեկավարվել հետևյալ նկատառումներով։

Կարմիր բանակի և նավատորմի շարքերն ընդհանրապես կազմված են բանվորա-գյուղացիական յերիտասարդությունից, ապրելով զորանոցային պայմաններում, նա ժամանակավորապես կտրված է արտադրությունից և ընտանեկան կյանքի պայմաններից։

Այս պայմաններում մեծ նշանակություն ունի կուսակցության շարքերը

մաքրելու և ստուգելու գործում ապահովել անկուսակցական կարմիր բանակային մասսայի ակտիվ մասնակցությունը, նույնպես և ոգտագործել նրանց ունեցած հերոսական փորձառություններն ու անկուսակցական հրամ. կազմի մասնագիտական գիտությունը, առանձնապես կոմբջիջի աշխատանքների գնահատման ժամանակ՝ կազմակերպության կռվի ունակությունը վորոշելիս։

Ստուգման հանձնաժողովների առաջ դրված հիմնական խնդրի հետ միասին—կուսակցության շարքերի մաքրում—հանձնաժողովները, ի լրումն ընդհանուր ինստրուկցիայի IV բաժանման 28-րդ կետի, պարտավոր են ուշադրություն դարձնել բջիջի դրության և նրա աշխատանքների վրա՝ զինվորական կվալիֆիկացիան բարձրացնելու, զինվորական դիսցիպլինան ամրապնդելու, կռվի ունակությունը ուժեղացնելու, քաղաքական և ընդհանուր մակարդակը բարձրացնելու և կարմիր բանակայինների, ինչպես կոմ-

մունիստների, նույնպես և անկուսակցականների ակտիվությունը բարձրացնելու վրա։

Բաց ժողովներ գումարելիս անհրաժեշտ է ձեռք առնել համապատասխան միջոցներ, վորպեսզի ապահովել այդ ժողովներում անկուսակցական կարմիր բանակայինների և հրամ. կազմի, առանձապես ակտիվի մաքսիմալ մասնակցությունը։

Կազմակերպելով բանավոր և գրավոր հայտարարությունների ու բողոքների ընդունելությունը ստուգման և զտման առթիվ, անհրաժեշտ է նախատեսնել ձեռնպահության առանձին դեպքեր, այսպիսով շատ գնահատելի նյութեր կարող են գտնվել վորոշ բանակայինների մոտ, վորոնք խուսափում են ներկայացնելուց, վախենալով, թե ստուգումից հետո կարող են յենթարկվել դիսցիպլինար պատժի։ Այդ պատճառով հայտարարությունների համար նախորոք պատրաստված արկղները պետք է գտնվեն ստուգման հանձնաժողովների անմիջական հսկողության տակ, հանձնաժողովի անդամները պետք է ընդունեն անմիջապես նաև բանավոր ու գրավոր առանձին հայտարարություններ, հայտարարությունը քննելիս պետք է զգույշ լինել բողոքողի ազգանունը հայտարարելիս։

Բողոքները քննելու ժամանակ անհրաժեշտ է նկատի առնել, վոր կարող են բողոքողներից վոմանք ստուգումն ու զտումը ոգտագործել իրենց անձնական հաշիվները մաքրելու, բամբասանքներով, անհիմն մեղադրանքներ բարդելով հրամ. կազմի վրա, վորը խստապահանջ է յեղել դիսցիպլինան իր բարձրության վրա պահելու, զորանոցային հանրակացարաններում գոյություն ունեցող կենցաղային կարգը չխախտելու։

Կուսակցական ժանը հանցանքներում մեղադրվող բանվորական կամ գյուղացիական ծագում ունեցող կարմիր բանակայինների գործերը քննելիս անհրաժեշտ է հաշվի առնել նրա բանակ մտնելու համեմատաբար կարճ ժամանակամիջոցը, նույնպես դեռևս

ընտելացած չլինելը զորանոցային կյանքին և ընտանեկան պայմաններից կտրվելը, իսկ հրամ. կազմի վերաբերմամբ, վոր մեզ և անցել հին բանակից, անհրաժեշտ և ուշադրության առնել նրա կատարած հերոսություններն ու ծառայությունները քաղաքացիական կռիվներում։

Միևնույն ժամանակ պետք է հիշել, վոր զորանոցային կենցաղի պայմաններում այնպիսի հանցանքներ, ինչպիսիք են կենցաղային փտությունը, ոտար ելեմենտների հետ կապը, բամբասանքն ու հարբեցողությունը, վնասակար բնույթ են կրում և զտման ժամանակ պետք է այդ հարցերին ավելի քան վճռական մոտեցում ցուցադրել։

Գյուղացիական ծագում ունեցող կոմունիստների ստուգման ժամանակ, վորոնք կապված են գյուղի հետ, նրանց տնտեսական կարողության չափն ու կատեգորիան վորոշելիս պետք է զգույշ լինել, այն դեպքում, յերբ գյուղի կապը արտահայտվում է կարմիրբանակայինների տրամադրության

վրա, վոր այս կամ այն ձևի տատանումն է առաջ բերում կուլակության գծի վերաբերմամբ, պետք է շուտափույթ և մանրամասն բացատրություններով միջոցով ցրել նրանց կասկածները, հաշվի առնելով դրա հետ նաև նրանց աշխատանքների ակտիվությունը մինչև կարմիր բանակի և նավատորմի շարքերը մտնելը։

Անհրաժեշտ է առանձին ուշադրությամբ մոտենալ այն դեպքերին, յերբ զորահավաքի կետերում վարժեցնում են նոր զորակոչի յենթարկվածներին՝ առանձին կոմունիստներ ստիպված են լինում ոգտվել կուլակների, գյուղական հարուստների, հակախորհրդային ելեմենտների սենյակներով, ամեն մի առանձին դեպքում պետք է պարզել, թե այդ բանը նրա հետևանքն է արդյոք, վոր անհնար է յեղել տեղավորվել չքավոր կամ միջակ գյուղացիների խրճիթներում, ինչ ազդեցություն են գործում կոմունիստների վրա ոտար ելեմենտների բնակարաններով ոգտվելը և ինչպես է պահում

կոմմունիստը գյուղի չքավոր-միջակ աղգաբնակության և իր միջավայրում։

Ստուգման հանձնաժողովների կազմի յեվ նրա ղեկավարության մասին

1. Զինվորական բջիջների զտման և ստուգման աշխատանքները ղեկավարում են, համաձայն ՀԿԿ (բ) ԿՎՀ ընդհանուր ինստրուկցիայի, տեղերում՝ տեղական ՎՀ։

2. Զինվորական բջիջների ստուգման և զտման համար վերահսկիչ հանձնաժողովները կազմակերպում են ստուգման հանձաժողովներ (յուրաքանչյուր դիվիզիայի համար 3-4, առանձին գարնիզոնը, նայած ոպատավորող կազմակերպությունների թվին, բայց վոչ ավել, քան մեկ ստուգման հանձնաժողով յուրաքանչյուր յերկու գնդի և համազոր թվով կոլլեկտիվի համար)։ Ստուգման հանձնաժողովները կազմակերպվում են այս կազմով—մեկ ներկայացուցիչ տեղական ՎՀ և յերկուսը առաջարկվում են դիվիզիայի կամ շրջանային կուսհանձնաժողովների կողմից։

3. Տեղական ՎՀ որացուցցային ժամանակի ծրագիրը կազմելիս պարտավոր են հաշվի առնել այն, վոր շատ կարմիր բանակային մասեր ամառային զորավարժությունների պատճառով հեռանում են իրենց մշտական բնակավայրերից, ուստի դրանցում պետք է ստուգումը կատարել մայիս և հունիս ամիսներում։

4. Ցերը ստուգման հանձնաժողովը գտնում է, վոր վորոշ ընկերներ իրենց վարած պաշտոններում վտանգավոր դեր կխաղան, կարող են տվյալ ընկերներին պաշտոնից հանելու մասին վորոշում հանել, բայց այդ վորոշումը կյանքի մեջ կիրառելու իրավունքը վերապահվում է համապատասխան հրամանատարական-քաղաքական ինստանցիաներին։ Պաշտոից հանման մասին յեղած վորոշումները հայտարարվում են միմիայն փակ կուսժողովում, համապատասխան քաղաքական որգանի համաձայնությամբ։

ՀԿԿ (բ) ԿՎՀ Կուսկոլլեգիայի
քարտուղ.՝ Յեմ. Յարոսլավսկիյ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0186636